A 10.02.06
Հ-85

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հովհաննիսյան Միքայել Դավիթի

Միջնադարյան արաբամուսուլմանական տեքստերի մետալեզվի առանձնահատկությունները՝ Ռասաիլ Իխուան աս-Սաֆա ժողովածուի օրինակի վրա:

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Գիտական ղեկավար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս.Բ. Կարաբեկյան

ԵՐԵՎԱՆ 2009

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Բ.Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Գ.Ս. Ասատրյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Ա. Տոնիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Վ.Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2009 թ. սեպտեմբերի 14-ին, ժ. 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 019 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորչի 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հր.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2009 թ. հունիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Մ. Սիմոնյան

3141-2009

1. Աշխատանքում ներկայացվող ընդհանուր հարցադրումները

XX դարում մի շարք գիտնականների կողմից առաջ քաշվեց մետալեզվական տեսությունը, որն իր էությամբ լեզվի ռեֆլեկտիվ նկարագրության համար անհրաժեշտ մեխանիզմների համալիր է[1]: Մետալեզուն ներկայացվում է որպես երկրորդ մակարդակի լեզու, որի նպատակն է նկարագրել լեզու-օբյեկտը: Այս իրողությունը ենթադրում է, որ նշված երկու լեզուները չեն կարող հանդես գալ իրարից անջատ, քանի որ նկարագրողն առանց նկարագրվողի կորցնում է իր գործառութային իմաստը, իսկ նկարագրվողը նկարագրողի բացակայության պարագայում այլևս դադարում է օբյեկտ լինել:

Մետալեզվի կիրառումը լայն տարածում գտավ գիտության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տրամաբանությունը, լեզվաբանությունը, գրաքննադատությունը, մաթեմատիկան, ինֆորմատիկան և այլն: Նման տարածումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «լեզու» ասելիս կարելի է ենթադրել ցանկացած նշանային համակարգ, որը կարող է նկարագրվել և հանգեցնել մետալեզվի առաջացմանը:

Արաբագիտության մեջ այդ տեսության կիրառումն, ի թիվս այլոց, թույլ է տալիս ուսումնասիրել միջնադարյան արաբամուսուլմանական որոշ տեքստեր՝ դիտարկելով դրանք որպես կուտակված բազմաբնույթ գիտելիքի համակարգման և գնահատման փորձ:

Միջնադարյան արաբամուսուլմանական մի շարք տեքստերի նմանօրինակ նկարագրությունն ու վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մուսուլմանական աշխարհում առկա գործընթացները նոր տեսանկյունից, ինչպես նաև ուսումնասիրելու միջնադարյան արաբամուսուլմանական ավանդույթի անդրադարձը սեփական խնդիրներին:

---

[1] Гаспаров Б.М. Язык, Память, Образ: Лингвистика языкового существования. М., Новое литературное обозрение, 1996. http://www.englspace.com/dl/details/gasparov.shtml

© National Library of Armenia

Արդեն իսկ լայնորեն կիրառվող մետալեզվական տեսությունը, այնուհանդերձ, լինելով համեմատաբար նոր երևույթ, առայժմ օժտված չէ ընդհանրական կառուցվածքով և հետագա զարգացման և հստակեցման կարիք ունի: Թերի ուսումնասիրված կամ ընդհանրապես չուսումնասիրված հարցերից են, մասնավորապես, նկարագրության դիտակետի և դրանից բխող՝ մետալեզու և լեզու-օբյեկտ զույգի դիրքավորման, ինչպես նաև մետալեզվի և մետատեքստի հարաբերակցության խնդիրները:

Ներկայացվող աշխատանքում, հիմնվելով մետալեզվական տեսության, մետատեքստային և երկտեքստային համակարգերի ուսումնասիրության վրա, դիտարկվում են رسائل إخوان الصفاء وخلان الوفاء, بيروت, دار الصدر /Rasail Ikhwan as-Safa'/ (այսուհետ՝ «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա») միջնադարյան արաբամուսուլմանական ժողովածուի կառուցվածքը և տեքստի առանձնահատկությունները:

2. *Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունը*

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է միջնադարյան արաբամուսուլմանական մշակույթի ուսումնասիրության անհրաժեշտությամբ և կարևորությամբ: Ուսումնասիրվող «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուն արտացոլում է միջնադարյան արաբամուսուլմանական մտավոր վերնախավի կողմից մուսուլմանական արժեհամակարգի, մուսուլմանական աշխարհում առկա խնդիրների ընկալումը, դրանց հնարավոր լուծումների որոնման, ինչպես նաև կուտակված գիտելիքի համակարգման, դասակարգման և կիրառելիության քննարկման գործընթացը: Այս տեսանկյունից աշխատանքը հնարավորություն է տալիս վերհանելու ներկայացված խնդիրներն ու գործոնները և նպաստելու միջնադարյան արաբամուսուլմանական մշակույթի ընկալմանը:

Արաբագիտության համատեքստում ներկայացվող աշխատանքը կարևոր է նաև միջնադարյան արաբամուսուլմանական տեքստերը վերլուծելիս մետալեզվական տեսության կիրառման, տեքստերի ռեֆլեկտիվ բնույթի ուսումնասիրության, ինչպես

նաև մետատեքստային և տերմինաբանական համակարգերի ուսումնասիրության տեսանկյունից:

3. *Աշխատանքի նպատակը*

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնասիրել «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի ընդհանուր կառուցվածքը,

բ) իրականացնել առանձին ուղերձների կառուցվածքային վերլուծությունը,

գ) նկարագրել ժողովածուի մեջ տեղ գտած տերմինաբանական համակարգերն ու դրանց արտահայտման ձևերը,

դ) բնութագրել ժողովածուն մետալեզու և լեզու-օբյեկտ զույգի համատեքստում,

ե) վերլուծել մետատեքստերի դերը մետալեզվի ձևավորման գործընթացում,

4. *Աշխատանքի նորույթը*

Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրելու «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուն ոչ միայն որպես աղբյուր, այլ նաև որպես տեքստ: Այլ կերպ ասած, աշխատանքում առաջին անգամ ժողովածուն ենթարկվում է տեքստաբանական վերլուծության, իրականացվում է ժողովածուի և առանձին ուղերձների կառուցվածքի վերլուծությունը՝ հիմնված տեքստի առանձնահատկություններից բխող մի շարք չափորոշիչների վրա:

Աշխատանքում նաև առաջին անգամ փորձ է արվում նկարագրելու ժողովածուն մետալեզու և լեզու-օբյեկտ համատեքստում, վերհանելու և վերլուծելու ժողովածուի մեջ ներկայացված տերմինաբանական համակարգերը և մետատեքստերը: Բացի այդ, առաջին և երկրորդ մակարդակի լեզուների դիրքավորման խնդիրը հստակեցնելու նպատակով աշխատանքում առաջին անգամ կիրառվում է «դիտակետ» հասկացությունը:

© National Library of Armenia

5. *Աշխատանքի մեթոդաբանությունը*

Աշխատանքի մեթոդաբանության հիմքում ընկած են նշանաբանական և իմացաբանական մակարդակներում տեքստի կառուցվածքային վերլուծության հասկացական ապարատը, ինչպես նաև մետալեզու և լեզու-օբյետ հարաբերությունների նկարագրման հիմքում ընկած հասկացական ապարատը:

6. *Աշխատանքի ժամանակագրական սահմանները*

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է VIII դարից մինչև X դար ընկած ժամանակահատվածը: Ընտրությունը պայմանավորված է ժողովածուի մեջ ընդգրկված գիտելիքի ձևավորման և արաբամուսուլմանական ավանդույթում ընդգրկման ժամանակահատվածի նկարագրության անհրաժեշտությամբ:

7. *Գրականության համառոտ տեսություն*

Ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ գիտական գրականությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ արաբագիտական-իսլամագիտական գրականություն և լեզվաբանական գրականություն, որոնցից առաջինը ներառում է «Իխուան աս-Սաֆա» խմբի և նրա կողմից հեղինակած ուղերձների ժողովածուի ուսումնասիրությանը նվիրված գիտական հետազոտությունները, ինչպես նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և գիտական իրավիճակը նկարագրող գիտական գրականությունը:

Նախ անհրաժեշտ է նշել, որ *Մաքրության եղբայրների* մասին տեղեկությունների հիմնական աղբյուրը խմբի ուղերձներն են, որոնց բազմաբնույթ բովանդակությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու խմբի հայացքների և գործունեության մասին:

Սրա հետ մեկտեղ կան մի շարք միջնադարյան աղբյուրներ, որոնք այս կամ այն համատեքստում հիշատակում են *Մաքրության եղբայրներին* և նրանց ժողովածուն: Դրանք են, մասնավորապես՝ Սիրիայի նիզարի-իսմաիլիները, որոնցից կարելի է առանձնացնել Նուր-ադ-Դին իբն Ահմադի (մահ. 1104-ին) «Քիթաբ ֆուսուլ ու ալ-ախբար» (Գիրք բաժինների և լուրերի) աշխատությունը, ինչպես նաև Աբու ալ-Մա'ալի Հաթիմ իբն Իմրան իբն Զուհրայի (մահ. 1104-ին) «ալ-Ուսուլ ուա ալ-ահքամ» (Հիմքերը և իմաստությունները) ստեղծագործությունը, որտեղ հեղինակը նշում է, որ «ուղերձները» իսմաիլի դաիների[2] համատեղ աշխատանքի արդյունք են[3]:

Մաքրության եղբայրների մասին պատմող միջնադարյան աղբյուրների մեկ այլ խումբ են կազմում Եմենի իսմաիլիների ժառանգությունը կազմող աշխատությունները: Հատկանշական է, որ Եմենի իսմաիլիները առաջինն էին, որ ընդգրկեցին «Ռասաիլը» իսմաիլիական գրականության իրենց ցանկում: Այս խմբում կարելի է առանձնացնել Ղարար իբն Մանսուր ալ-Յամանի (883-970) «Սիրաթ իբն Հաշաբ» (Իբն Հաշաբի վարքը) ստեղծագործությունը, Իբրահիմ իբն ալ-Հուսայն ալ-Համիդիի (մահ. 1162–ին) «Քանզ ալ-Ուալադ»-ը (Սերնդի գանձերը), Մուհամմադ իբն Թահիրի (մահ. 1188-ին) «ալ-Անուար ալ-Լատիֆա»-ն (Հրաշալի լույսերը), Հաթիմ իբն Իբրահիմի (մահ.1199-ին) «Թանբիհ ալ-Ղաֆիլին» (Քնածների արթնացումը) ստեղծագործությունը, ինչպես նաև Ալի իբն Մուհամմադ բին ալ-Ուալիդ ալ-Անֆի (մահ. 1215-ին) «Դամիղ ալ բատիլ ուա հաֆդ ալ-մունազիլ» (Կեղծիքների հերքումը և աստվածային ճշմարտությունների պահպանումը) աշխատությունը, Հուսայն իբն Ալի ալ-Անֆի (մահ. 1268-ին) «Ռիսալա ալ-Ուահիդա»-ն (Միակ ուղերձը) և Իդրիս Իմադ-ուդ-Դինի (մահ. 1468-ին) «Ույուն ալ-ախբար» (Լուրերի աղբյուրները) ժողովածուները[4]:

---

[2] Իսմաիլիական ավանդույթում այսպես են անվանվում իսմաիլի քարոզիչները

[3] Այս մասին տես՝ Ислам. Энциклопедический Словарь, М. ., Наука, 1989., сс. 110-114

[4] Այս մասին տես՝ Ikwhan as-Safa, Stanford Enciclopedia of philosophy.

http://plato.stanford.edu/entries/ikhwan-al-safa/

© National Library of Armenia

Չնայած ներկայացված անունների պատկառելի ցանկին՝ նշված հեղինակները հիմնականում պատմում են «Ռասաիլի» մասին: Ինչ վերաբերում է այս աղբյուրներում ընդգրկված՝ խմբի էությունը և գործունեությունը նկարագրող հատվածներին, ապա վերջիններիս իմամիլական բնույթը որոշակի խոչընդոտ է դառնում դրանց միանշանակ ընկալման համար:

Ժամանակակից փուլում *Մաքրության եղբայրների* վերլուծությունը կարևորվել է նախ այն պատճառով, որ «Ռասաիլը» դիտարկվել է որպես իր նախադեպը չունեցող հանրագիտարան, և երկրորդ՝ միջնադարյան արաբական փիլիսոփայության համատեքստում հելլենիստական գաղափարների հարմարեցման գործընթացն ուսումնասիրելու նպատակով:

Ժողովածուի մանրակրկիտ հետազոտություններից հատուկ ուշադրության են արժանի հետևյալ աշխատությունները՝ Իվ Մարքեյի «*Մաքրության եղբայրների փիլիսոփայությունը. իմամը և հասարակությունը*»[5], Մուհամեդ Ղալեբի «*Մաքրության եղբայրների* որոնումը»[6], որն, ըստ էության, ժողովածուի բոլոր 52 ուղերձները վերլուծելու միակ փորձն է, Գոդֆրուա դե Կալատեի «Գիտելիքի դասակարգումը համաձայն *Մաքրության եղբայրների*»[7], Ելոիս Հարթի «*Մաքրության եղբայրների* ուղերձները»[8], Օմար Ֆարուքի «*Մաքրության եղբայրները*»[9], Ասղար Ալիի «*Մաքրության եղբայրներ.* ռացիոնալ և լիբերալ մոտեցումները իսլամին»[10], ինչպես նաև Զաքիր Գասիմովի և Այդին Ալի Զադեի «Մաքրության եղբայրների

[5] Marquet, Y., La philosophie des Ihwan as-Safâ': l'imam et la societe, (Travaux et documents N° 1), Dakar: Université de Dakar, 1973

[6] Ghaleb M., Searching Brethren of Purity», ed. Ismail K. Poonawala, Beirut, 1980

[7] de Callatay G., "The classification of sciences according to the Rasa'il Ikwan al-Safa'", The Institute of Ismaili Studies, London, 2003

[8] Hart E., Epistles of Brethren of Purity, from http://www.theosophy-nw.org/theosnw/world/mideast/rel-elo2.htm

[9] Farrukh Omar A., Ikhwan al-Safa , from http://www.muslimphilosophy.com/hmp/18.htm#_ftn3#_ftn3

[10] Ali A., Ikhwan as-Safa: A Rational and Liberal Approach to Islam, from http://www.amaana.org/ikhwan/ikhwan1.htm

փիլիսոփայության սոցիալ-ուտոպիստական ասպեկտները»[11]: Բոլոր նշված աշխատությունները անդրադառնում են ժողովածուին առնչվող առանձին խնդիրների հետազոտությանը, ուստի չեն կարող դիտարկվել որպես ժողովածուի ամբողջական և համակողմանի ուսումնասիրություններ: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «Ռասաիլ Իխուան աս-Սաֆայի» համալիր վերլուծություն առ այսօր չի իրականացվել:

Նկարագրվող ժամանակահատվածը ուսումնասիրող աշխատություններից օգտագործվել են Գ. Ֆոն Գրյունեբաումի[12], Ե.Ա. Բեյաևի[13], Թ. Դե Բոերի[14], Օ.Գ. Բոլշակովի[15], Ֆ. Դաֆթարիի, Վ.Վ. Բարտոլդի և մի շարք այլ գիտնականների հետազոտությունները, որոնցում ներկայացվում են VIII-X դարերում մուսուլմանական աշխարհում տեղ գտած հիմնական գործընթացներն ու զարգացումները կրոնաքաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական և գիտական ոլորտներում:

Գիտական գրականության երկրորդ խումբը ընդգրկում է տեսական լեզվաբանությանը, մասնավորապես՝ մետատեքստ, մետալեզու, լեզու-օբյեկտ, հասկացություններին, լեզվական գործառույթներին, տեքստի հաղորդակցական մեխանիզմներին, ինչպես նաև տեքստի կառուցվածքային վերլուծությանը նվիրված գիտական աշխատությունները:

Այս խմբում ընդգրկված և աշխատանքի իրականացման ընթացքում օգտագործված գիտական ուսումնասիրություններից անհրաժեշտ է առանձնացնել

[11] Гасымов З., Али-Заде А. Социально-утопические аспекты философии «Чистых братьев», http://www.topos.ru/article/3483

[12] Фон Грюнебаум Г.Э. Классический ислам. М. , Наука, 1986.

[13] Беляев Е.А.. Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье. М., Наука, 1966.

[14] De Boer T.J. The History of Philosophy in Islam. Islamic Philosophy online. http://www.muslimphilosophy.com/ip/deboer.htm

[15] Большаков О. Г. История Халифата. М., Восточная литература, 1998.

© National Library of Armenia

Ռ.Յակոբսոնի[16], Մ.Լոտմանի[17], Բ. Ուսպենսկու[18], Ա. Ռեֆորմատսկու[19], Լ. Ելմսլևի[20], Ռ.Բարտի[21], Մ. Ռեդդիի[22] և Ա. Վեժբիցկայի[23] աշխատությունները, որոնք նվիրված են մետալեզու և լեզու-օբյեկտ զույգի հարաբերությունների, մետալեզվի կառուցվածքի և հիմնական գործառույթների, տեքստում մետատեքստի արտահայտման ձևերի, տեքստի կառուցվածքային և կոմպոզիցիոն վերլուծությանը, ինչպես նաև տերմինաբանական համակարգերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

8. Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ատենախոսության հիմնական դրույթները, հարցադրումներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել լեզվաբանության, արաբագիտության և իսլամագիտության ոլորտում իրականացվող համապատասխան ոսումնասիրություններում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական

---

[16] Якобсон Р. Лингвистика и Поэтика, Структурализм: "за" и "против", М., 1975 http://philologos.narod.ru/classics/jakobson-lp.htm

[17] Лотман Ю.М. «Текст в тексте»//Ученые записки Тартуского Государственного Университета, вып. 567, Труды по знаковым системам XIV, Тару, 1981. http://www.gumer.info/bibliotek_Buks/Culture/Lotm/14.php

[18] Успенский Б.А. Поэтика композиции. СПб, «Азбука», 2000.

[19] Реформатский А.А., Принципы синхронного описания языка, Лингвистика и поэтика, М, 1987. http://www.philology.ru/linguistics1/reformatskiy-87a.htm

[20] Ельмслев Л. «Пролегомены к теории языка», Зарубежная лингвистика 1, М., Прогресс, 1997.

[21] Барт Р. Избранные работы: Семиотика. М .,Поэтика, 1994. http://www.gumer.info/bibliotek_Buks/Culture/Bart/_01.php

[22] Reddy, Michael J. (1979). "The conduit metaphor: A case of frame conflict in our language about language", in *Metaphor and Thought*, ed. Andrew Ortony, 2nd edn, Cambridge: Cambridge University Press, 1993.

[23] Вежбицка А. «Метатекст в тексте». Новое в зарубежной лингвистике. М., Прогресс, 1978.

հաստատություններում՝ մասնագիտական դասընթացներում և ընդհանուր կրթական ծրագրերում:

9. Աշխատանքի փորձաքննությունը

Ատենախոսության մի շարք դրույթներ և հետևություններ հրապարակվել են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի կողմից հրատարակվող «Արաբագիտական ուսումնասիրություններ» ժողովածուներում, ինչպես նաև օգտագործվել են ԵՊՀ արաբագիտության ամբիոնում իրականացվող «Արաբամուսուլմանական քաղաքակրթության պատմություն և իսլամագիտություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդվող «Մուսուլմանական փիլիսոփայություն» դասընթացի համապատասխան հատվածում:

10. Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ նկարագրվում են աշխատանքում ներկայացվող հիմնական հարցադրումները, հիմնավորվում է ուսումնասիրվող խնդիրների գիտական արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակները, գիտական նորույթը, աշխատանքի մեթոդաբանությունը, ուսումնասիրության ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործած գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև ներկայացվում է խնդրի ուսումնասիրության առարկան մետալեզվական նկարագրության և մետատեքստային տեսության լույսի ներքո:

Առաջին գլուխը վերնագրված է “Լեզու-օբյեկտ, մետալեզու և տերմինաբանության նշանաբանական շրջանակ” և ներկայացնում է մետալեզվական տեսությանը, մետատեքստին և տերմինաբանությանը վերաբերող գիտական

© National Library of Armenia

ապարատի այն հատվածը, որն անհրաժեշտ է ատենախոսության մեջ արծարծվող հարցադրումների մանրամասն և համակողմանի վերլուծության համար:

Առաջին՝ «Լեզու-օբյեկտ և մետալեզու հասկացությունները հումանիտար գիտություններում. մետալեզվի հիմնական գործառույթները և կառուցվածքային առանձնահատկությունները. մե տալեզվի ձևավորման հիմնական սկզբունքները. մետալեզու և նշանակցում» վերնագրված ենթագլխում ներկայացվում է մետալեզու և լեզու–օբյեկտ հասկացությունների առաջացման պատմությունը, էությունն ու կիրառությունը տարբեր գիտություններում, ինչպես նաև նշված հասկացությունների կառուցվածքը և գործառական առանձնահատկութունները: Ենթագլխում իրականացվում է նաև մետալեզու և նշանակցում հասկացությունների համեմատությունը, դրանց միջև առկա ընդհանրությունների և տարբերությունների վերհանումը, ինչպես նաև առաջ է քաշվում նկարագրման դիտակետի առկայության անհրաժեշտության թեզը, որի նպատակը սահմանվում է որպես նկարագրության համար պահանջվող նախապայման:

Գլխի երկրորդ՝ «Տերմինի դերը մետալեզվի ձևավորման գործընթացում. Տերմինաբանության նշանաբանական շրջանակ» ենթագլուխը ներառում է տերմինաբանության՝ որպես լեզվի նկարագրման կարևոր գործիքի, կառուցվածքի և առանձնահատկությունների վերհանումը: Այստեղ ներկայացվում է նաև տերմինաբանության դերը մետալեզվի ձևավորման գործընթացում:

Երրորդ՝ «Մետալեզու և մետատեքստ. "կրիտիկական մետատեքստային զանգված" և մետալեզվի ձևավրումը» ենթագլխում տեղ են գտել մետատեքստ հասկացության էության, կառուցվածքի և գործառույթների նկարագրությունը, մետատեքստի և մետալեզվի՝ որպես համապատասխանաբար տեքստի և լեզվի նկարագրման համակարգերի համեմատությունը, ինչպես նաև առաջ է քաշվել մետալեզվի ձևավորման գործընթացում մետատեքստային համակարգի մասնակցության և «կրիտիկական մետատեքստային զանգվածի» մասին թեզը: Այս ենթագլխում առաջարկվում է նաև «շրջիկ մետատեքստային միավորների» գաղափարը, որը կարող է ստանալ հետևյալ ձևակերպումը. ժամանակային,

մշակութային և դիսցիպլինար նույն միջավայրում, ինչպես նաև նույն համատեքստում ընդգրկված տեքստերի միջև ինֆորմացիայի, գաղափարների, տեսությունների փոխանցման ընթացքում տեղի է ունենում շրջանառություն, որի արդյունքում տեքստից տեքստ են անցնում ձևակերպումները, սահմանումները, տերմինները և հասկացությունները: Այդ շրջանառությունը իրականացվում է առաջին հերթին հղումների, մեջբերումների և տերմինները փոխառելու միջոցով:

Այս նկարագրությունը կարելի է առավել ցայտուն ձևով ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով՝



Որտեղ T1-ի բուն տեքստից առաջանում են նշված միավորները, որոնք T2-ի համար արդեն մետատեքստ են և գրվում են «ղուսանցքում»: T3-ում արդեն կարող են որպես մետատեքստ օգտագործվել թե՛ T1-ից և թե՛ T2-ից եկած հատվածները, ընդ որում, եթե T1-ից T3 են փոխանցվում միայն բուն տեքստային հատվածները, ապա T2-T3 փոխանցման պարագայում հնարավոր է թե՛ տեքստ-«լուսանցք» և թե՛ «լուսանցք-լուսանցք» փոխա նցումը: Այս գործընթացը հանդիսանում է նաև ընդհանուր տերմինաբանության և նշված տեքստային միջավայրում այդ տերմինաբանության գործառական համակարգի ձևավորման հիմքը:

Նման «շրջիկ մետատեքստային միավորների» առկայությունը նշված համատեքստում ծառայում է որպես խոսույթի ձևավորման միջոց՝ արդյունքում ստեղծելով մետալեզուն, որը սկսում է նկարագրել նշված տեքստերը ընդհանրացնող

© National Library of Armenia

և դրանք այլ տեքստերից տարբերակող լեզուն: Այս առումով համատեքստը այն ընկալման դաշտն է, որի մեջ են գտնվում նշված տեքստերը:

Գլխի վերջին՝ չորրորդ ենթագլուխը կոչվում է <u>«Մետալեզու և լեզու– օբյեկտ կապի տեքստային դրսևորումները. արտահայտության պլան և բովանդակության պլան»</u>: Այս ենթագլխում արդեն իսկ ներկայացված մետալեզվի ներքին և միջմակարդակային կապերը և դրանց տեքստային արտահայտումը կապվում է արտահայտության պլան և բովանդակության պլան հասկացությունների հետ:

Ենթագլխում նաև ներկայացվում է մետալեզու և լեզու-օբյեկտ մակարդակային հարաբերակցությունը: Եթե փորձենք պատկերել լեզու–օբյեկտը որպես զրոյական մակարդակ, այնուհետև ավելացնենք մետալեզուն, որն, ինչպես հայտնի է, իր մեջ է ներառում լեզու-օբյեկտը՝ հավելելով տերմինաբանությունը և նկարագրման համար անհրաժեշտ մեխանիզմները, ապա կհանգենք մի պատկերի, որում լեզու–օբյեկտը հանդես է գալիս որպես միջուկ՝ ընդգրկվելով մետալեզվի մեջ:



Այժմ, եթե անհրաժեշտ է նկարագրել Մետալեզու 1-ը, ի հայտ է գալիս Մետալեզու 2-ը, որի համար նախորդը արդեն միատարր երևույթ չէ: Այս պարագայում Մետալեզու 2-ի տեսանկյունից լեզու–օբյեկտը կարող է դիտարկվել որպես բովանդակության պլան, իսկ Մետալեզու 1-ը՝ արտահայտության: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որպեսզի այս երկկազմ համակարգը դիտարկվի որպես մի նշանային գործառույթ:

Ներկայացված երկու գծապատկերները թույլ են տալիս նկարագրելու մետատեքստի մասնակցության հնարավոր ձևը մետալեզվի ձևավորման գործընթացում: Արդյունքում երկու գծապատկերների համադրությունը ձևավորում է մի համակարգ, որում առկա ներքին և միջմակարդակային գործընթացները հանդիսանում են մետալեզվի ձևավորման և հետագա զարգացման հիմնական մեխանիզմները:

Գծապատկերների համադրությունը ստանում է հետևյալ գրաֆիկական տեսքը՝



© National Library of Armenia

Այստեղ առկա են երեք՝ տուփային սկզբունքով մեկը մյուսի մեջ տեղադրված, սակայն ավտոնոմ համակարգեր, որոնք հաղորդակցվում են մետատեքստերի միջոցով թե՛ ներսում և թե՛ դրսում, ընդ որում արտաքին հաղորդակցումը հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ առաջանում է մակարդակներից որևէ մեկի նկարագրության անհրաժեշտությունը, որը և խթանում է հաջորդ մակարդակի ձևավորումը:

Այս տրամաբանությամբ, թեև Մետալեզու 2–ի համար նկարագրման առարկան Մետալեզու 1–ն է, այնուամենայնիվ բովանդակության պլանի տեսանկյունից որպես հիմք նկարագրվում է լեզու-օբյեկտը և այն գործողությունները, որոնք Մետալեզու 1-ը կատարում է լեզու-օբյեկտը նկարագրելիս:

Բացի այդ՝ պատկերից հստակ երևում է, որ յուրաքանչյուր նոր մակարդակի տեքստերի համար «հումք» են հանդիսանում նախորդ մակարդակի տեքստերից տեղափոխված կամ ներմուծված մետատեքստերը: Այս մետատեքստերը նախ հարմարեցվում են տվյալ մակարդակի համատեքստին, այսինքն՝ նկարագրվում են տվյալ մակարդակի լեզվով, որպեսզի ստանան կիրառելի լինելու հնարավորություն:

Նշված նկարագրությունը կարելի է դիտարկել հետևյալ կերպ. մետատեքստի մուտքը նոր մակարդակ իրականացվում է բովանդակության պլանի գործառելիի՝ ֆունկտիվի միջոցով, իսկ նոր մակարդակի լեզվով մետատեքստի «թարգմանությունը» հավելվում է, և տվյալ մակարդակի շրջանակներում մետատեքստը կիրառելի է դառնում արդեն արտահայտության պլանի գործառելիի միջոցով:

Ատենախոսության երկրորդ՝ “Իխուան աս-Սաֆա. խումբը, ժողովածուն, ժամանակաշրջանը” գլուխը ներկայացնում է աշխատանքի ուսումնասիրության առարկա հանդիսացող *Մաքրության եղբայրներ* գաղտնի փիլիսոփայական խմբի և “Ռասաիլ Իխուան աս-Սաֆա” ժողովածուի մանրամասն և համակողմանի նկարագրությունը:

Գլխի առաջին՝ «Պատմաաշխարհագրական ակնարկ» վերնագրով ենթագլխում նկարագրվում է խմբի գործունեության ժամանակաշրջանը, ներկայացվում են

մուսուլմանական աշխարհում առկա հիմնական գործընթացները քաղաքական, կրոնափիլիսոփայական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում, ինչպես նաև ներկայացվում են այն հիմնական գործընթացները, որոնք հանգեցրեցին X դարի մուսուլմանական աշխարհում ստեղծված իրավիճակին:

Երկրորդ՝ «Մաքրության եղբայրներ» խմբի գործունեության էությունը. խմբի կառուցվածքը և գաղափարախոսության հիմնական դրույթները» ենթագլուխը ներառում է խմբի կառուցվածքի նկարագրությունը, գաղափարախոսության, մասնավորապես՝ տիեզերաբանության նկարագրությունն ու վերլուծությունը, խմբի գաղափարախոսության հիմքը կազմող իսմաիլիականության և պերիպատետիկ փիլիսոփայության առանձնահատկությունները:

«Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի տեղը միջնադարյան արաբամուսուլմանական գրավոր մշակույթում» վերնագրված երրորդ ենթագլխում ժողովածուն դիտարկվում է միջնադարյան արաբամուսուլմանական մշակույթի համատեքստում: Ենթագլխում նախ ներկայացվում են գիտելիքի կուտակման և դասակարգման հիմնական մեխանիզմները, ներկայացվում է օտար՝ ոչ մուսուլմանական, գիտելիքի թարգմանության և վերլուծության գործընթացը: Այնուհետև դիտարկվում է ժողովածուի դերը այդ համատեքստում, որը սահմանվում է որպես կուտակված գիտելիքի դասակարգման և ռեֆլեկտիվ ընկալման փորձ:

Ժողովածուն դիտարկվում է նաև մուսուլմանական պերիպատետիկ փիլիսոփայության համատեքստում: Ենթագլխում իրականացվում է խմբի գործունեության և ժողովածուի համեմատությունը մուսուլմանական պերիպատետիկ փիլիսոփայության դպրոցի այլ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև վեր է հանվում տարբեր փիլիսոփայական գաղափարների և տեսությունների զարգացման ընթացքը մուսուլմանական պերիպատետիկ փիլիսոփայության շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս պատկերացնելու *Իխուան աս-Սաֆայի* տեղը փիլիսոփայական այդ դպրոցի պատմության մեջ:

Գլխի եզրափակող՝ «*Ռասաիլ Իխուան աս-Սաֆա* ժողովածուի բովանդակային կազմը և կառուցվածքային առանձնահատկությունները» վերնագրված ենթագլուխը

© National Library of Armenia

տալիս է ժողովածուի մանրամասն բովանդակային նկարագրությունը, խմբի կողմից իրականացրած գիտելիքի բաժանման սկզբունքների, ինչպես նաև ժողովածուի ընդհանուր կառուցվածքի վերլուծությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Մետալեզուն և մետատեքստը «Մաքրության եղբայրների ուղերձները» ժողովածուի մեջ» վերնագրված գլուխը, որում կիրառվում են առաջին և երկրորդ գլուխներում ներկայացված վերլուծական ապարատը և աղբյուրը, ներկայացնում է տեքստի վերլուծությունը մետալեզվական նկարագրության, մետատեքստային տեսության և տերմինաբանական համակարգերի լույսի ներքո: Երրորդ գլուխն, ըստ էության, հանդիսանում է ատենախոսության վերլուծական կորիզը, որում իրականացվում է աշխատանքում առաջադրված խնդիրների ուսումնասիրությունը:

Գլխի առաջին ՝«Մաքրության Եղբայրների ուղերձները» ժողովածուի առանձին ուղերձների կառուցվածքային առանձնահատկությունները» ենթագլխում առաջարկվում է ուղերձների կառուցվածքի վերլուծությունը, որն իրականացվում է հետևյալ չափանիշների միջոցով՝

- ուղերձի ծավալը,
- ուղերձը սկզբնավորող և ուղերձում առկա այլ օրհնությունները, բարեմաղթանքները և փառաբանման խոսքերը՝ ուղղված Ալլահին, մարգարեներին և այլն,
- ուղերձի տեքստում առկա ներքին սեգմենտների բաժանումը (սկիզբ և ավարտ),
- ուղերձի և նրա բաժինների վերնագրերը,
- ուղերձի ավարտը:

Երկրորդ ՝ «Տերմինների խմբերը, տեսակները և օգտագործման եղանակները «Մաքրության Եղբայրների ուղերձները» ժողովածուի մեջ» ենթագլխում իրականացվում է ժողովածուի տերմինաբանական համակարգերի վերհանումն ու դասակարգումը: Տեքստի վերլուծության՝ արդյունքում ի հայտ են գալիս տերմինաբանական երկու հիմնական կորիզներ՝ սեփական և օտար ավանդույթների հիման վրա ձևավորված: Այդ տերմինաբանական համակարգերը տեքստի տարբեր

հատվածներում հանդես են գալիս թե՛ որպես առանձին նկարագրման համակարգ և թե՛ միմյանց փոխլրացնելով:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են նաև ուղերձների հաղորդակցական առանձնահատկությունները, որոնք իրականացվում են տեքստի առանձին հատվածների հասցեագրման միջոցով, ինչպես նաև ներկայացվում են *քառասուլ* ժանրի *ռիսալա* ժանրային ձևի գործառական և կառուցվածքային առանձնահատկությունները:

Երրորդ գլուխը եզրափակող երրորդ ենթագլուխը կոչվում է «Մետալեզուն և մետատեքստը «Մաքրության Եղբայրների ուղերձները» ժողովածուի մեջ» և ամբողջացնում է Ռասաիլ Իխուան աս-Սաֆա ժողովածուի տեքստի օրինակի վրա մետալեզվի և մետատեքստի կապի վերհանումը: Այս ենթագլխում օգտագործվում են առաջին գլխում ներկայացված գծապատկերները, որոնք համալրվում են երկրորդ և երրորդ գլուխներում ներկայացված Ռասաիլ Իխուան աս-Սաֆա տեքստի բովանդակային միջուկով: Այս առանձնահատկություններն արտահայտող բովանդակային միջուկով: Այս ենթագլխում տրվում է ժողովածուի նկարագրությունը՝ հիմնվելով հասկացական այն ապարատի վրա, որը ներկայացվել էր նախորդ հատվածներում:

Ժողովածուն իրենից ներկայացնում է մետալեզվին անհրաժեշտ բաղկացուցիչների բարդ և բացառիկ մի համադրություն:

Նշված բաղկացուցիչներն են՝

- X դարում Բասրայում բնակվող մտավոր վերնախավին պատկանող իսմաիլի գիտնականների համար հասանելի աշխարհի մասին առկա ողջ «բառապաշարը»:
- սեփական և օտար ավանդույթի միջոցով ստացված և ժողովածուի մեջ մետատեքստերի միջոցով ամրագրված տերմինաբանությունը:
- նկարագրությունն իրականացնելու համար անհրաժեշտ գաղափարական դիտակետը:

© National Library of Armenia

Այս նկարագրությունը համընկնում է ատենախոսության առաջին գլխում տրված մետալեզվի նկարագրությանը, որտեղ որպես մետալեզվի բաղկացուցիչներ են սահմանվում՝

- լեզու-օբյեկտի բառապաշարը
- լեզու-օբյեկտի նկարագրության համար անհրաժեշտ տերմինաբանությունը
- լեզու-օբյեկտի նկարագրության համար անհրաժեշտ դիտակետը

Ուստի կարելի է հանգել հետևյալ աղյուսակին՝

<table>
<tr><td>$RIS=(ot+mat^{mt}+ft^{mt})^{iis}$
RIS- Ռասաիլ Իխուան աս-Սաֆա
Ot- սեփական տեքստ
Mat^{mt}- արաբամուսուլմանական ավանդույթ (մետատեքստերի միջոցով)
Ft^{mt}-օտար ավանդույթ (մետատեքստերի միջոցով)
Iis- Մաքրության եղբայրների գաղափարախոսությունը</td><td>$Ml=(L+term)^{op}$
Ml-մետալեզու
L-լեզու-օբյեկտ
Term -տերմինաբանություն
OP- դիտակետ</td></tr>
<tr><td colspan="2">$L= Ot * n^{crit.}, Term= mat^{mt}+ft^{mt}, Op=iis$
$n^{crit.}$-տեքստի «կրիտիկական զանգված»</td></tr>
<tr><td colspan="2">$(Ot +mat^{mt}+ft^{mt})^{iis}=(L+term)^{op}$
⇩
RIS=Ml</td></tr>
</table>

Անդրադառնալով դիտակետերի խնդրին՝ այս ենթագլխում իրականացվում է ուսումնասիրվող ժողովածուի և ատենախոսության համեմատությունը, որը ստանում է հետևյալ գրաֆիկական պատկերը:



Այստեղ Լեզու-օբյեկտ1-ը *Մաքրության եղբայրների* ուսումնասիրման առարկան է, Մետալեզու1-ը Մաքրության եղբայրների կողմից օգտագործվող նկարագրման լեզուն, որը նկարագրվելով սույն ատենախոսության մեջ, հանդիսանում է նաև լեզու-օբյեկտ2, իսկ ատենախոսի կողմից նկարագրման համար օգտագործվող լեզուն համապատասխանաբար հանդիսանում է Մետալեզու2: Դիտակետ 1-ը Մաքրության Եղբայրների գաղափարախոսությունն է, իսկ Դիտակետ 2-ը՝ ատենախոսի կողմից օգտագործվող հետազոտական դիրքորոշումը:

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները և արվում են հետևյալ եզրահանգումները.

- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի միջոցով խմբի անդամները մշակել են մի լեզու, որն իր նկարագրությամբ և գործառույթներով համապատասխանում է մետալեզու հասկացության նկարագրությանը:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի մեջ առկա է տերմինաբանական երկու համակարգ, որոնք սեփական և օտար ավանդույթների միջոցով ձևավորված համակարգեր են:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի մեջ փոխառությունների, մեջբերումների, տերմինների համադրման կամ հարմարեցման միջոցով

© National Library of Armenia

փորձ է արվում իրականացնել բուն գիտելիքի նկարագրությունը՝ դիրքավորելով այն որպես օբյեկտ:

- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի մեջ խմբի գաղափարախոսությունն օգտագործվում է որպես նկարագրության դիտակետ և սահմանում նկարագրման ձևն ու բովանդակությունը:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆան» իր բնույթով ռեֆլեկտիվ ժողովածու է, որի միջոցով փորձ է արվում ամփոփելու, դասակարգելու և վերլուծելու X դարում արաբամուսուլմանական աշխարհին հասանելի սեփական և օտար գիտելիքը:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուն կարելի է բնութագրել որպես կուռ և ամբողջական կառուցվածք ունեցող աշխատություն՝ գիտելիքի դասակարգման հստակ մեխանիզմներով:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի մեջ տեղ գտած ուղերձների տեքստերը օժտված են հաղցեագրման հստակ մեխանիզմներով, որոնց միջոցով սահմանվում են տեքստի ընկալման տարբեր մակարդակներ:
- «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» ժողովածուի բովանդակությունը մեծապես ազդված է նեոպլատոնականության և խմախիլականության գաղափարներից, որի արդյունքում տեքստը ձեռք է բերում իմաստային բազմաշերտություն, որն իր հերթին ազդում է ժողովածուի և առանձին ուղերձների կառուցվածքի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Հովհաննիսյան, Մ., Երկնային և երկրային քաղաքները «Ռասաիլ Իխուան աս-Սաֆայում», Իխուան աս-Սաֆայի սոցիալական փիլիսոփայության հիմնական էությունը, Արաբագիտական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու), Երևան, 2006: 179-192
2. Հովհաննիսյան, Մ., «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» բովանդակային կազմի և կառուցվածքային առանձնահատկությունների շուրջ, Արաբագիտական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու), հտ. Բ, Երևան, 2007: 155-165
3. Հովհաննիսյան, Մ., «Ռասաիլ Իխուան աս-Սաֆա» որոշ կոմունիկատիվ առանձնահատկությունների շուրջ, Արաբագիտական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու), հտ. Գ, Երևան, 2009: 27-37

© National Library of Armenia

Оганесян Микаэл Давидович

Особенности метаязыка средневековых арабо-мусульманских текстов на примере сборника "Расаил Ихван ас-Сафа"

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности

10.02.06- "Древние и новые языки Азии"

Резюме

Диссертационная работа посвящена изучению особенностей метаязыка и рефлективных проявлений средневековых арабо-мусульманских текстов на примере сборника "Расаил Ихван ас-Сафа" (Послания Братьев Чистоты) группы средневековых арабо-мусульманских ученых Ихван ас-Сафа (Братья Чистоты).

В VIII-X веках в мусульманском мире формировались основные религиозные, научные, богословские течения и направления, активно переводились и комментировались работы до того времени недоступных работ античных, иранских и индийских авторов, что способствовало накоплению огромного количества информации относящейся к логике, философии, филологии, риторике, точным наукам и т.д. Параллельно этому процессу осуществлялась квалификация знаний, необходимая для их полного осмысления и адаптации к мусульманским реалиям. В результате квалификации и комментирования новых знаний появилось большое количество работ, которые в основном осуществлялись в отдельных дисциплинах, таких, как философия, лингвистика, поэзия, география и т.д. В отличие от большинства работ этого рода, "Послания Братьев Чистоты" можно квалифицировать, как попытку классификации информации всех доступных отраслей знания.

Подобный фундаментальный подход обусловлен наличием необходимости переосмысления как чужеродной информации, так и возможностей синтеза ее с собственным традиционным знанием.

Рефлективно-описательный характер исследуемого сборника дает возможность применения теории метаязыка как языка, описывающего язык-обьект, а так же теории

двутекста, согласно которой текст состоит из собственно текста и метатекста описывающего и обьясняющего. В диссертации осуществляется классификация терминов, используемых в сборнике, и выявление их основных функций в контексте метаязыковой и метатекстовой теорий.

Работа состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения.

Во введении- обосновывается актуальность темы исследования, дается обзор литературы и источников, определяются цели и задачи исследования.

В первой главе- "Язык-обьект, метаязык и терминологическая семиосфера" дается подробное описание основных понятий, таких, как метаязык, язык-обьект, текст, терминология, метатекст, позиция описания и т.д., необходимых для подробного изучения текста сборника и выявления его рефлективно-описательных особенностей.

Во второй главе- "Ихван ас-Сафа: група, сборник, эпоха" подробно описывается период с VIII-го по X-ый век, в частности процесс накопления, анализа, классификации и адаптации информации. В главе дается подробное описание идеологии и структуры "Братьев чистоты", производится детальный анализ структуры сборника и классификации знания согласно представлениям группы.

В третьей главе- "Метаязык и метатекст в сборнике "Послания Братьев Чистоты", производится композиционный анализ отдельных посланий, анализ текста посланий в контексте метаязыковой теории, а так же классификация терминологических систем используемых в посланиях.

В заключении подводятся итоги работы, обобщаются выводы, сделанные в ходе исследования.

© National Library of Armenia

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան
NL1710325

© National Library of Armenia

© National Library of Armenia